ՆԱՊՈԼԷՈՆ Գ· ԿԱՅՍԵՐ

Առատաձեռնութիւնն առ Մխիթարեան միաբանութիւնս ։

Երախտագիտութեան և խորին շնորհակալեաց պարտք կը համարինք ծանուցանել համազգի հասարակութեան, որ անցեալ տարուան հրամանագրովք Նաբոլէոն Գ վեհափառ կայսրն Գաղղիոյ հաճեցաւ կրկին առատաձեռնութեամբք պատուել զՄիաբանութիւնս, շնորհելով իւր մեծագին և վայելչանկար կերպարանքը՝ կայսերական չքով և գաւազանաւ ներկայացեալ, և ընտիր՝ մեծագին և բազմահատոր գրքեր 'ի զարդ մատենադարանիս մերոյ ։ Մօտերս հասան ձեռքերնիս յիշեալ պարգևները. և գըրոց անուանքն են հետևեալքը.

Երկասիրութիւնք Նաբոլէոնի Գ.ի, հատորք 4:

Գլարագ, Նկարագիր անօթեաց, կիսարձանաց, բարձր քանդակաց և արձանագրաց մուսէոնին Լուվրի, և այլն. հատորք 6, և նոյնչափ հատորք պատկերաց :

Վիյլմէն (Willemin) և Բոդիէ, Գաղղիական յիշատակարանք անտիպք, 'ի Զ դարէ ցսկիզբըն ԺԷ-ին, այսինքն Ճաշակք քաղաքային և զինուորական տարազուց զգեստուց, զինուց և ըսպառազինութեանց, արուեստականաց, կահից, և այլն. հատորք 2 միածալ (պատկերազարդ):

Վիսգոնդի, Պատկերագրութիւն յունական, հաւաքումն ստոյգ դիմաց կայսերաց, արքայից և արանց հոյակապից վաղեմի ժամանակաց. հատորք 3, և հատոր մի պատկերաց միածալ :

Մոնժէ, Պատկերագրութիւն հռոմէական. հատորք 4, և հատոր մի պատկերաց միածալ :

Բէռէ, Գետնադամբանք Հռոմայ. ճարտարապետութիւն, նկարք որմոց, լապտերք, անօթք, արձանագիրք, փորագրութիւնք ականց պատուականաց, և այլն. հատորք 5 պատկերաց միածալ, և հատոր վեցերորդ բացատրութեանց՝ նոյնադիր :

Ֆլանտէն, Արևելք, միածալ և պատկերազարդ. ցարդ հրատարակեալքն՝ նկարագիրք Պօլսոյ, Զմիւռնիոյ և Հռոդոսի ։

Տարսէլ, Գանձ եկեղեցւոյն Գոնք աւանի, պատկերազարդ :

Սոլէմեան հատակոտորք սրբոց Հարց և եկեղեցական մատենագրաց, որ ցարդ անտիպք էին. ժողովեալք 'ի Բիդրայէ, հատորք 4 :

Վեհանձն կայսեր այս ուշադրութիւնը՝ բոլորովին ձրիատուր է, և ուրիշ կերպով չմեկնուիր՝ բայց եթէ կայսերական ցեղին բնիկ մեծահոգի բարուքը, և իւր վեհափառութեան արևելեան ազգաց մտաւոր զարգացմանը վըրայ ցըցուցած հաճութեամբն ու հովանաւորութեամբը ։ Մխիթարեան միաբանութիւնն անմոռաց պիտի պահէ այս առատաձեռնութեան յիշատակը ։